ՎԻԵՆՆԱՅԻ ԿՈՆՎԵՆՑԻԱ

Հյուպատոսական հարաբերությունների մասին

Սույն Կոնվենցիայի մասնակից պետությունները,

նշելով, որ ժողովուրդների միջև հյուպատոսական հարաբերությունները հաստատվել են հին ժամանակներից,

ուշադրության առնելով Միավորված ազգերի կազմակերպության կանոնադրության նպատակներն ու սկզբունքները պետությունների ինքնիշխան հավասարության, միջազգային խաղաղության և անվտանգության պահպանման և ժողովուրդների միջև բարեկամական հարաբերությունների զարգացմանը նպաստելու վերաբերյալ,

հաշվի առնելով, որ Միավորված ազգերի կազմակերպության՝ դիվանագիտական հարաբերությունների և անձեռնմխելիության կոնֆերանսը ընդունել է «Դիվանագիտական հարաբերությունների մասին» Վիեննայի Կոնվենցիան, որը ստորագրելու համար բաց է եղել 1961 թվականի ապրիլի 18-ից,

համոզված լինելով, որ հյուպատոսական հարաբերությունների, արտոնությունների և անձեռնմխելիության մասին միջազգային Կոնվենցիան ևս կնպաստի պետությունների միջև բարեկամական հարաբերությունների զարգացմանը՝ անկախ դրանց պետական և հասարակական համակարգերի տարբերություններից,

գիտակցելով, որ նման արտոնություններն ու անձեռնմխելիությունը հատկացվում են ոչ թե ի շահ առանձին անձանց, այլ իրենց պետությունների անունից հյուպատոսական հիմնարկների գործառույթների արդյունավետ իրականացումն ապահովելու համար,

հավաստելով, որ միջազգային սովորութային իրավունքի նորմերը շարունակում են կարգավորել սույն Կոնվենցիայի դրույթներով ուղղակիորեն չնախատեսված հարցերը,

համաձայնեցին ներքոհիշյալի մասին.

Հոդված 1
Սահմանումներ

1. Սույն Կոնվենցիայի նպատակների համար ներքոհիշյալ արտահայտություններն ունեն հետևյալ նշանակությունը.

ա) «հյուպատոսական հիմնարկ» նշանակում է՝ ցանկացած գլխավոր հյուպատոսություն, փոխհյուպատոսություն կամ հյուպատոսական գործակալություն,

բ) «հյուպատոսական տարածաշրջան» նշանակում է՝ այն շրջանը, որը հյուպատոսական հիմնարկի համար առանձնացված է հյուպատոսական գործառույթներ կատարելու համար,

գ) «հյուպատոսական հիմնարկի ղեկավար» նշանակում է՝ այն անձը, որին հանձնարարված է գործելու այդ պաշտոնում,

դ) «հյուպատոսական պաշտոնատար անձ» նշանակում է՝ ցանկացած անձ, ներառյալ հյուպատոսական հիմնարկի ղեկավարը, որին հանձնարարված է այդ պաշտոնում հյուպատոսական գործառույթների կատարումը,

ե) «հյուպատոսական ծառայող» նշանակում է՝ հյուպատոսական հիմնարկում վարչական կամ տեխնիկական պարտականություններ կատարող անձ,

զ) «սպասարկման անձնակազմի անդամ» նշանակում է՝ հյուպատոսական հիմնարկում սպասարկման պարտականություններ կատարող ցանկացած անձ,

է) «հյուպատոսական հիմնարկի անդամներ» նշանակում է՝ հյուպատոսական պաշտոնատար անձինք, հյուպատոսական ծառայողներ և սպասարկող անձնակազմի անդամներ,

ը) «հյուպատոսական անձնակազմի անդամներ» նշանակում են՝ հյուպատոսական պաշտոնատար անձինք, բացառությամբ հյուպատոսական հիմնարկի ղեկավարի, հյուպատոսական ծառայողներ և սպասարկման անձնակազմի անդամներ,

թ) «մասնավոր տնային աշխատող» նշանակում է՝ հյուպատոսական հիմնարկի աշխատողի մոտ բացառապես մասնավոր ծառայության մեջ գտնվող անձ,

ժ) «հյուպատոսական շինություններ» նշանակում են՝ բացառապես հյուպատոսական հիմնարկի նպատակների համար օգտագործվող շենքերը կամ շենքերի մի մասը և տվյալ շենքը կամ շենքի մի մասը սպասարկող հողակտորը՝ ում էլ որ պատկանելիս լինի դրանց սեփականության իրավունքը,

ժա) «հյուպատոսական արխիվները» իրենց մեջ ներառում են բոլոր թղթերը, փաստաթղթերը, գրքերը, ֆիլմերը, ձայնագրված ժապավենները և հյուպատոսական հիմնարկի գրանցման մատյանները՝ ծածկագրելով և կոդերով, քարտարաններով և դրանց անվթարության կամ պահպանման համար նախատեսված կահավորանքի ցանկացած առարկայով հանդերձ:

2. Գոյություն ունի հյուպատոսական պաշտոնատար անձանց երկու կարգ՝ հյուպատոսական հաստիքային պաշտոնատար անձինք և հյուպատոսական պատվավոր պաշտոնատար անձինք: Սույն Կոնվենցիայի 2-րդ գլխի դրույթները տարածվում են այն հյուպատոսական հիմնարկների վրա, որոնք ղեկավարվում են հաստիքային հյուպատոսական պաշտոնատար անձանց կողմից, 3-րդ գլխի դրույթները տարածվում են այն հյուպատոսական հիմնարկների վրա, որոնք ղեկավարվում են պատվավոր հյուպատոսական պաշտոնատար անձանց կողմից:

3. Հյուպատոսական հիմնարկների այն անդամների կարգավիճակը, որոնք ընդունող պետության քաղաքացիներ են կամ մշտապես բնակվում են այդ պետությունում, կարգավորվում է սույն Կոնվենցիայի 71-րդ հոդվածով:

Գլուխ 1. Ընդհանուր դրույթներ հյուպատոսական հարաբերությունների մասին

Բաժին 1. Հյուպատոսական հարաբերությունների հաստատումը և իրականացումը

Հոդված 2
Հյուպատոսական հարաբերությունների հաստատումը

1. Պետությունների միջև հյուպատոսական հարաբերությունների հաստատումը իրականացվում է փոխադարձ համաձայնությամբ:

2. Երկու պետությունների միջև դիվանագիտական հարաբերություններ հաստատելու մասին տրված համաձայնությունը նշանակում է հյուպատոսական հարաբերությունների հաստատման համաձայնություն, եթե վերապահում արված չէ:

3. Դիվանագիտական հարաբերությունների խզումը առաջ չի բերում ipso facto հյուպատոսական հարաբերությունների փաստացի խզում:

Հոդված 3
Հյուպատոսական գործառույթների կատարումը

Հյուպատոսական գործառույթները կատարում են հյուպատոսական հիմնարկները: Դրանք կատարում են նաև դիվանագիտական ներկայացուցչությունները՝ սույն Կոնվենցիայի դրույթներին համապատասխան:

Հոդված 4
Հյուպատոսական հիմնարկի բացումը

1. Հյուպատոսական հիմնարկ ընդունող պետության տարածքում կարող է բացվել միայն այդ պետության համաձայնությամբ:

2. Հյուպատոսական հիմնարկի նստավայրը, նրա դասը և հյուպատոսական տարածաշրջանը սահմանվում են ուղարկող պետության կողմից և ենթակա են ընդունող պետության հավանությանը:

3. Հյուպատոսական հիմնարկի, նստավայրի, նրա դասի կամ հյուպատոսական տարածաշրջանի փոփոխությունները ուղարկող պետության կողմից կարող են իրականացվել միայն ընդունող պետության համաձայնությամբ:

4. Ընդունող պետության համաձայնությունը պահանջվում է նաև այն դեպքում, եթե որևէ գլխավոր հյուպատոսություն կամ հյուպատոսություն ցանկանում է փոխհյուպատոսություն կամ հյուպատոսական հիմնարկ բացել ոչ այն բնակավայրում, որտեղ նա ինքն է գտնվում:

5. Ընդունող պետության նախնական որոշակի համաձայնությունն անհրաժեշտ է նաև գրասենյակի բացման համար, որը գոյություն ունեցող հյուպատոսական հիմնարկի բաղկացուցիչ մասն է վերջինիս գտնվելու վայրից դուրս:

Հոդված 5
Հյուպատոսական գործառույթներ

Հյուպատոսական գործառույթներ են հանդիսանում.

ա) ընդունող պետությունում ուղարկող պետության և նրա քաղաքացիների՝ ֆիզիկական և իրավաբանական անձանց շահերի պաշտպանությունը՝ միջազգային իրավունքով թույլ տրվող սահմաններում,

բ) ուղարկող պետության և ընդունող պետության միջև առևտրական, տնտեսական, մշակութային և գիտական հարաբերությունների զարգացմանը նպաստելը, ինչպես նաև այլ ուղիներով նրանց միջև բարեկամական հարաբերությունների զարգացմանը նպաստելը՝ սույն Կոնվենցիայի դրույթներին համապատասխան,

գ) բոլոր օրինական միջոցներով ընդունող պետության առևտրական, տնտեսական, մշակութային և գիտական կյանքի պայմանների ու իրադարձությունների պարզաբանումը, դրանց մասին հաղորդումը ուղարկող պետության կառավարությանը և տեղեկություններ ներկայացնելը շահագրգիռ անձանց,

դ) ուղարկող պետության քաղաքացիներին անձնագրեր ու ճանապարհորդական փաստաթղթեր և ուղարկող պետություն մեկնելու ցանկություն ունեցող անձանց մուտքի արտոնագրեր կամ համապատասխան փաստաթղթեր տալը,

ե) ուղարկող պետության քաղաքացիներին՝ ֆիզիկական և իրավաբանական անձանց, օգնություն և աջակցություն ցույց տալը,

զ) նոտարի, քաղաքացիական կացության ակտեր արձանագրողի պարտականությունների և նման ուրիշ պարտականությունների կատարումը, ինչպես նաև վարչական բնույթի մի քանի գործառույթների իրականացումը՝ պայմանով, որ այդ դեպքում ոչինչ չի հակասի ընդունող պետության օրենքներին ու կանոններին,

է) ուղարկող պետության քաղաքացիների՝ թե ֆիզիկական և թե իրավաբանական անձանց, շահերի պաշտպանությունը ժառանգման դեպքում «mortis causa», ընդունող պետության տարածքում՝ ընդունող պետության օրենքներին և կանոններին համապատասխան,

ը) ընդունող պետության օրենքներով և կանոններով սահմանված շրջանակներում անչափահասների և լրիվ գործունակություն չունեցող այլ անձանց շահերի պաշտպանությունը, որոնք հանդիսանում են ուղարկող պետության

քաղաքացիներ, և հատկապես այն դեպքում, երբ այդպիսի մարդկանց նկատմամբ պահանջվում է հաստատել խնամակալություն կամ հոգաբարձություն,

թ) ընդունող պետությունում ընդունված պրակտիկայի և կարգի պահպանմամբ հանդերձ՝ ուղարկող պետության քաղաքացիների ներկայացուցչությունը կամ պատշաճ ներկայացուցչության ապահովումը ընդունող պետության դատական և այլ հիմնարկներում՝ նպատակ ունենալով ընդունող պետության օրենքներին և կանոններին համապատասխան ստանալ կարգադրություններ այդ քաղաքացիների իրավունքներն ու շահերը պաշտպանող նախնական միջոցների մասին, երբ բացակայության կամ այլ պատճառներով այդ քաղաքացիները չեն կարող ժամանակին իրականացնել իրենց իրավունքների ու շահերի պաշտպանությունը,

ժ) դատական և արտադատական փաստաթղթերի հանձնումը կամ դատական հանձնարարությունների կամ էլ վկայություններ վերցնելու վերաբերյալ հանձնարարությունների կատարումը ուղարկող պետության դատարանների համար՝ գործող միջազգային համաձայնագրերին համապատասխան կամ, նման համաձայնագրերի բացակայության դեպքում, ցանկացած այլ կարգով, որը չի հակասում ընդունող պետության օրենքներին և կանոններին,

ժա) ուղարկող պետության ազգություն ունեցող նավերի, այդ պետությունում գրանցված ինքնաթիռների, ինչպես նաև դրանց անձնակազմի նկատմամբ վերահսկողության և տեսչության հավատարմագրող պետության օրենքներով և կանոններով նախատեսվող իրավունքների իրականացումը,

ժբ) օգնություն ցույց տալը սույն հոդվածի «ժա» կետում հիշատակված նավերին և ինքնաթիռներին, և դրանց անձնակազմին, նավերի նավարկության վերաբերյալ դիմումների ընդունումը, նավի փաստաթղթերի զննումն ու ձևակերպումը և, առանց ընդունող պետության իշխանությունների իրավունքներին վնաս հասցնելու, ճանապարհին տեղի ունեցած ամեն մի պատահարի հետաքննությունը և նավապետի, հրամանատարական կազմի և նավաստիների միջև ամեն կարգի վեճի լուծումը, քանի որ դա նախատեսվում է ուղարկող պետության օրենքներով և կանոններով,

ժգ) ուղարկող պետության կողմից հյուպատոսական հիմնարկի վրա դրված այլ գործառույթների կատարումը, որոնք չեն արգելվում ընդունող պետության օրենքներով ու կանոններով, կամ որոնց կատարման դեմ ընդունող պետությունը առարկություն չունի, կամ որոնք նախատեսվում են ուղարկող պետության և ընդունող պետության միջև գործող միջազգային պայմանագրերով:

Հոդված 6
Հյուպատոսական գործառույթների կատարումը հյուպատոսական տարածաշրջանի սահմաններից դուրս

Հյուպատոսական պաշտոնատար անձը, հատուկ հանգամանքների բերումով, ընդունող պետության հանձնարարությամբ կարող է իր գործառույթները կատարել հյուպատոսական տարածաշրջանի սահմաններից դուրս:

Հոդված 7
Հյուպատոսական գործառույթների կատարումը երրորդ պետությունում

Ուղարկող պետությունը կարող է համապատասխան պետություններին ծանուցելուց հետո մի պետությունում բացված հյուպատոսական հիմնարկին հանձնարարել հյուպատոսական գործառույթներ կատարել մեկ այլ պետությունում, եթե այդ պետություններից որևէ մեկի կողմից չկա որոշակիորեն արտահայտված առարկություն:

Հոդված 8
Հյուպատոսական գործառույթների կատարումը երրորդ պետության կողմից

Ընդունող պետությանը համապատասխան կերպով ծանուցելուց հետո ուղարկող պետության հյուպատոսական հիմնարկը կարող է, եթե ընդունող պետությունը չի առարկում, ընդունող պետությունում հյուպատոսական գործառույթներ կատարել երրորդ պետության անունից:

Հոդված 9
Հյուպատոսական հիմնարկների ղեկավարների դասերը

1. Հյուպատոսական հիմնարկների ղեկավարները բաժանվում են չորս դասի. դրանք են՝

ա) գլխավոր հյուպատոսներ,

բ) հյուպատոսներ,

գ) փոխհյուպատոսներ,

դ) հյուպատոսական գործակալությունների ղեկավարներ:

2. Սույն հոդվածի 1-ին կետը ոչ մի կերպ չի սահմանափակում պայմանավորվող կողմերից որևէ մեկի իրավունքը՝ սահմանելու հյուպատոսական պաշտոնատար այն անձանց անվանումը, որոնք չեն հանդիսանում հյուպատոսական հիմնարկների ղեկավարներ:

Հոդված 10
Հյուպատոսական հիմնարկների ղեկավարների նշանակումը և աշխատանքի անցնելու թույլտվությունը

1. Հյուպատոսական հիմնարկների ղեկավարները ներկայացվում են ուղարկող պետության կողմից և իրենց գործառույթների կատարմանն են թույլատրվում ընդունող պետության կողմից:

2. Սույն Կոնվենցիայի դրույթների պահպանմամբ հյուպատոսական հիմնարկի ղեկավարի նշանակման և աշխատանքի անցնելու թույլտվության վերաբերյալ ձևականությունները սահմանվում են, համապատասխանաբար, ուղարկող պետության և ընդունող պետության օրենքներով, կանոններով և սովորույթներով:

Հոդված 11
Հյուպատոսական արտոնագիրը կամ նշանակման ծանուցումը

1. Ուղարկող պետությունը հյուպատոսական հիմնարկի ղեկավարին տալիս է փաստաթուղթ, որն ունի արտոնագիր կամ դրա համանման ակտի ձև, որ կազմում է յուրաքանչյուր նշանակման ժամանակ՝ հավաստելով նրա պաշտոնը և նշելով, որպես ընդհանուր կանոն, նրա լրիվ անունը և ազգանունը, այն կարգը կամ դասը, որին նա պատկանում է, հյուպատոսական տարածաշրջանը և հյուպատոսական հիմնարկի նստավայրը:

2. Ուղարկող պետությունը այդ արտոնագիրը կամ դրան համանման ակտը դիվանագիտական կամ համապատասխան այլ ուղիով ուղարկում է այն պետության կառավարությանը, որի տարածքում հյուպատոսական հիմնարկի ղեկավարը պետք է կատարի իր գործառույթները:

3. Եթե ընդունող պետությունը համաձայն է, ուղարկող պետությունը կարող է արտոնագրի կամ դրան համանման ակտի փոխարեն ընդունող պետությանն ուղարկել ծանուցում, որը պետք է պարունակի սույն հոդվածի 1-ին կետում նշված տվյալները:

Հոդված 12
Էկզեկվատուրան

1. Հյուպատոսական հիմնարկի ղեկավարը ձեռնամուխ է լինում կատարելու իր գործառույթները՝ ընդունող պետության կողմից ստանալով թույլտվություն, որը կոչվում է էկզեկվատուրա, ինչ ձևի էլ նման թույլատվությունը լինի:

2. Այն պետությունը, որը մերժում է էկզեկվատուրա տալը, պարտավոր չէ ուղարկող պետությանը հաղորդել այդ մերժման պատճառները:

3. Բացառությամբ 13-րդ և 15-րդ հոդվածներում նախատեսված դեպքերի, հյուպատոսական հիմնարկի ղեկավարը չի կարող անցնել իր պարտականությունների կատարմանը մինչև էկզեկվատուրա ստանալը:

Հոդված 13
Հյուպատոսական հիմնարկների ղեկավարների՝ աշխատանքի անցնելու ժամանակավոր թույլտվությունը

Մինչև էկզեկվատուրայի հանձնումը հյուպատոսական հիմնարկի ղեկավարը կարող է ժամանակավոր թույլտվություն ստանալ՝ անցնելու համար իր գործառույթների կատարմանը: Այդ դեպքում կիրառվում են սույն Կոնվենցիայի դրույթները:

Հոդված 14
Հյուպատոսական տարածաշրջանի իշխանություններին ծանուցելը

Հենց որ հյուպատոսական հիմնարկի ղեկավարին թույլատրվում է, անգամ՝ ժամանակավորապես, անցնել իր գործառույթների կատարմանը, ընդունող պետությունը անմիջապես այդ մասին ծանուցում է հյուպատոսական տարածաշրջանի իրավասու իշխանություններին: Դրանից բացի, պետությունն ապահովում է այնպիսի միջոցների ձեռնարկումը, որոնք հնարավոր են, որ հյուպատոսական հիմնարկի ղեկավարը կարողանա ի պաշտոնե կատարել իր պարտականությունները և օգտվել սույն Կոնվենցիայից բխող արտոնություններից:

Հոդված 15
Հյուպատոսական հիմնարկի ղեկավարի գործառույթների ժամանակավոր կատարումը

1. Եթե հյուպատոսական հիմնարկի ղեկավարը չի կարող կատարել իր գործառույթները, եթե հյուպատոսական հիմնարկի ղեկավարի պաշտոնը թափուր է, հյուպատոսական հիմնարկի ղեկավարի գործառույթները ժամանակավորապես կարող է կատարել հյուպատոսական հիմնարկի ղեկավարի պաշտոնակատարը:

2. Հյուպատոսական հիմնարկի ղեկավարի պաշտոնակատարի լրիվ անունն ու ազգանունը հաղորդվում են ընդունող պետության արտաքին գործերի նախարարությանը կամ այդ նախարարության նշված մարմնին՝ ուղարկող պետության դիվանագիտական ներկայացուցչության կողմից, կամ, եթե այդ պետությունը ընդունող պետությունում չունի նման ներկայացուցչություն, ապա հյուպատոսական հիմնարկի ղեկավարի կողմից, կամ, եթե նա ի վիճակի չէ այդ բանն անելու, ապա ուղարկող պետության ցանկացած իրավասու մարմնի կողմից: Ընդունող պետությունը իր համաձայնությամբ կարող է վերապահություն անել՝ թույլատրելու որպես հյուպատոսական հիմնարկի ղեկավարի պաշտոնակատարի այնպիսի մարդու, որը ընդունող պետության մեջ չի հանդիսանում ուղարկող պետության ոչ դիվանագիտական գործակալ, ոչ հյուպատոսական պաշտոնատար անձ:

3. Ընդունող պետության իրավասու մարմինները հյուպատոսական հիմնարկի ղեկավարի պաշտոնակատարին ցույց են տալիս օգնություն և աջակցություն: Քանի դեռ նա ղեկավարում է հիմնարկը, նրա վրա տարածվում են սույն Կոնվենցիայի դրույթները այն նույն հիմքով, ինչ որ համապատասխան հյուպատոսական հիմնարկի ղեկավարի վրա: Եվ, այնուամենայնիվ, ընդունող պետությունը պարտավոր չէ հյուպատոսական

հիմնարկի ղեկավարի ժամանակավոր պաշտոնակատար անձին հատկացնել առավելություններ, արտոնություններ և անձեռնմխելիություն, որոնցից օգտվում է հյուպատոսական հիմնարկի ղեկավարը, սոսկ այն պայմանների բերումով, որոնց հյուպատոսական հիմնարկի ղեկավարի ժամանակավոր պաշտոնակատարը չի համապատասխանում:

4. Եթե ընդունող պետությունում ուղարկող պետության դիվանագիտական ներկայացուցչության դիվանագիտական անձնակազմի անդամը սույն հոդվածի 1-ին կետի դրույթներին համապատասխան ուղարկող պետության կողմից նշանակվում է հյուպատոսական հիմնարկի ղեկավարի պաշտոնակատար, ապա նա շարունակում է օգտվել դիվանագիտական արտոնություններից և անձեռնմխելիությունից՝ պայմանով, որ ընդունող պետությունը դրա դեմ չառարկի:

Հոդված 16
Ավագությունը հյուպատոսական հիմնարկների ղեկավարների միջև

1. Հյուպատոսական հիմնարկների ղեկավարներին շնորհվում են յուրաքանչյուր դասում որոշակի տեղեր՝ ավագության կարգով, որոնք շնորհվում են անձի և անվանացանկի գործերով:

2. Սակայն եթե հյուպատոսական հիմնարկի ղեկավարը մինչև էկզեկվատուրա ստանալը ժամանակավորապես թույլտվություն է ստացել անցնելու իր գործառույթների կատարմանը, նրա ավագությունը որոշվում է ժամանակավոր թույլտվության ամսաթվով, և այդ ավագությունը նրա համար պահպանվում է նաև էկզեկվատուրան ստանալուց հետո:

3. Հյուպատոսական հիմնարկների՝ միևնույն օրը էկզեկվատուրա ստացած կամ ժամանակավորապես իրենց գործառույթները կատարելու թույլատրված երկու կամ մի քանի ղեկավարների միջև ավագությունը որոշվում է ընդունող պետությանը ներկայացված նրանց արտոնագրերի կամ արտոնագրերին համանման ակտերի ամսաթվերով կամ այն ծանուցումների ամսաթվերով, որոնք հիշատակված են 11-րդ հոդվածի 3-րդ կետում:

4. Հյուպատոսական հիմնարկների ղեկավարների պաշտոնակատարները ավագության կարգով տեղեր են զբաղեցնում բոլոր հյուպատոսական հիմնարկների ղեկավարներից հետո, իսկ նրանց միջև ավագությունը որոշվում է նրանց կողմից հիմնարկների ղեկավարների պարտականությունները ժամանակավորապես կատարելուն ձեռնամուխ լինելու ամսաթվերից, որոնք նշված են 15-րդ հոդվածի 2-րդ կետին համապատասխան արված ծանուցումներում:

5. Հյուպատոսական հիմնարկների ղեկավարներ հանդիսացող պատվավոր հյուպատոսական պաշտոնատար անձինք յուրաքանչյուր դասում տեղեր են զբաղեցնում հյուպատոսական հիմնարկի հաստիքային ղեկավարներից հետո՝ այն կարգով և այն կանոններին համապատասխան, որոնք շարադրված են նախորդ կետերում:

6. Հյուպատոսական հիմնարկների ղեկավարներին ավագության կարգով պատկանում են ավելի բարձր տեղեր այդ կարգավիճակը չունեցող հյուպատոսական պաշտոնատար անձանց համեմատությամբ:

Հոդված 17
Հյուպատոսական պաշտոնատար անձանց կողմից դիվանագիտական ակտերի կատարումը

1. Այն պետությունում, որտեղ ուղարկող պետությունը չունի դիվանագիտական ներկայացուցչություն, և որտեղ նա դիվանագիտական ներկայացուցչությամբ չի ներկայացված երրորդ պետության կողմից, հյուպատոսական պաշտոնատար անձը կարող է, ընդունող պետության համաձայնությամբ և առանց փոփոխելու նրա

հյուպատոսական կարգավիճակը, լիազորված լինել կատարելու դիվանագիտական ակտեր: Նման ակտերի կատարումը հյուպատոսական պաշտոնատար անձի կողմից նրան իրավունք չի տալիս հավակնելու լրացուցիչ արտոնությունների և անձեռնմխելիության:

2. Հյուպատոսական պաշտոնատար անձը, ընդունող պետությանը ծանուցելուց հետո, կարող է որպես ուղարկող պետության ներկայացուցիչ գործել ցանկացած միջկառավարական կազմակերպությանն առընթեր: Գործելով որպես այդպիսին՝ նա իրավունք ունի օգտվելու բոլոր այն արտոնություններից և անձեռնմխելիությունից, որոնք այդպիսի ներկայացուցչին հատկացվում են միջազգային սովորութային իրավունքով կամ միջազգային պայմանագրերով: Սակայն ինչ վերաբերում է նրա կողմից ցանկացած հյուպատոսական գործառույթների կատարմանը, ապա նա իրավունք չունի ընդդատության ավելի լայն անձեռնմխելիության, քան այն է, որը հյուպատոսական պաշտոնատար անձը իրավունք ունի սույն Կոնվենցիային համապատասխան:

Հոդված 18
Երկու կամ մի քանի պետությունների կողմից միևնույն անձին հյուպատոսական պաշտոնատար անձ նշանակելը

Երկու կամ մի քանի պետություններ ընդունող պետության համաձայնությամբ միևնույն անձին այդ պետությունում կարող են նշանակել որպես հյուպատոսական պաշտոնատար անձ:

Հոդված 19
Հյուպատոսական անձնակազմի անդամների նշանակումը

1. 20-րդ, 22-րդ և 23-րդ հոդվածների դրույթներում նախատեսված բացառություններով ուղարկող պետությունը կարող է ազատ կերպով նշանակել հյուպատոսական անձնակազմի անդամներին:

2. Ուղարկող պետությունը ընդունող պետությանը նախօրոք հաղորդում է բոլոր հյուպատոսական պաշտոնատար անձանց անունը և ազգանունը, կարգը և դասը, բացի հյուպատոսական հիմնարկի ղեկավարից, այն հաշվով, որ ընդունող պետությունը կարողանա, եթե ցանկանում է, իրականացնել 23-րդ հոդվածի 3-րդ կետում նախատեսված իր իրավունքը:

3. Ուղարկող պետությունը կարող է, եթե դա պահանջվում է նրա օրենքներով և կանոններով, խնդրել ընդունող պետությանը էկզեկվատուրա տալ հյուպատոսական հիմնարկի պաշտոնատար այն անձին, որը չի հանդիսանում հյուպատոսական հիմնարկի ղեկավար:

4. Ընդունող պետությունը կարող է, եթե դա պահանջվում է նրա օրենսդրությամբ, էկզեկվատուրա տալ հյուպատոսական հիմնարկի պաշտոնատար որևէ անձի, որը չի հանդիսանում հյուպատոսական հիմնարկի ղեկավար:

Հոդված 20
Հյուպատոսական անձնակազմի թվաքանակը

Հյուպատոսական անձնակազմի թվաքանակի մասին կոնկրետ պայմանավորվածության բացակայության դեպքում ընդունող պետությունը կարող է առաջարկել, որ անձնակազմի թվաքանակը չանցնի այն սահմաններից, որոնք նա գտնում է բնական և նորմալ՝ հաշվի առնելով հյուպատոսական տարածաշրջանում գոյություն ունեցող հանգամանքներն ու պայմանները և տվյալ հյուպատոսական հիմնարկի պահանջմունքները:

Հոդված 21
Ավագությունը հյուպատոսական հիմնարկի պաշտոնատար անձանց միջև

Ուղարկող պետության դիվանագիտական ներկայացուցչությունը կամ, եթե այդ պետությունը նման ներկայացուցչություն չունի ընդունող պետությունում, հյուպատոսական հիմնարկի ղեկավարը ընդունող պետության արտաքին գործերի նախարարությանը կամ այդ նախարարության կողմից նշված մարմնին հաղորդում է հյուպատոսական հիմնարկի հյուպատոսական պաշտոնատար անձանց միջև ավագության մասին, ինչպես նաև՝ այդ կարգի ամեն մի փոփոխության մասին:

Հոդված 22
Հյուպատոսական պաշտոնատար անձանց քաղաքացիությունը

1. Սկզբունքորեն հյուպատոսական պաշտոնատար անձինք պետք է լինեն ուղարկող պետության քաղաքացիներ:

2. Հյուպատոսական պաշտոնատար անձինք չեն կարող նշանակվել ընդունող պետության քաղաքացիների թվից ոչ այլ կերպ, քան առանց այդ պետության որոշակիորեն արտահայտված համաձայնության. ընդ որում այդ համաձայնությունը կարող է վերացվել ցանկացած ժամանակ:

3. Ընդունող պետությունը կարող է իր համար նման իրավունքի վերապահում անել երրորդ պետության քաղաքացիների նկատմամբ, որոնք միաժամանակ չեն հանդիսանում ուղարկող պետության քաղաքացիներ:

Հոդված 23
Non-Grata, անցանկալի հայտարարված անձինք

1. Ընդունող պետությունը կարող է ցանկացած ժամանակ ուղարկող պետությանը ծանուցել այն մասին, որ այս կամ այն հյուպատոսական պաշտոնատար անձը հանդիսանում է persona non grata (անցանկալի անձ), կամ որ հյուպատոսական հիմնարկի ցանկացած անդամը համարվում է անընդունելի: Այդ դեպքում ուղարկող պետությունը պետք է, համապատասխանաբար, հետ կանչի այդ անձին կամ դադարեցնի նրա գործառույթները հյուպատոսական հիմնարկում:

2. Եթե ուղարկող պետությունը հրաժարվի կատարել կամ ընդունելի ժամանակահատվածում չկատարի իր պարտականությունները, որոնք նախատեսված են սույն հոդվածի 1-ին կետում, ընդունող պետությունը կարող է, համապատասխանաբար, չեղյալ հայտարարել տվյալ անձի էկզեկվատուրան կամ դադարել նրան հյուպատոսական հիմնարկի անդամ համարելուց:

3. Հյուպատոսական հիմնարկի անդամ նշանակված անձը կարող է հայտարարվել անընդունելի մինչև ընդունող պետության տարածք ժամանելը, կամ, եթե նա արդեն գտնվում է ընդունող պետությունում, մինչ նա կանցնի իր պարտականությունների կատարմանը հյուպատոսական հիմնարկում: Ամեն դեպքում ուղարկող պետությունը չեղյալ է համարում նրա նշանակումը:

4. Սույն հոդվածի 1-ին և 3-րդ կետերում նշված դեպքերում ընդունող պետությունը պարտավոր չէ ուղարկող պետությանը հայտնել իր որոշման պատճառների մասին:

Հոդված 24
Նշանակումների, ժամանման և մեկնման մասին ընդունող պետությանը ծանուցելը

1. Ընդունող պետության արտաքին գործերի նախարարությանը կամ այդ նախարարության կողմից նշված մարմնին ծանուցվում է.

ա) հյուպատոսական հիմնարկի անդամների նշանակման, հյուպատոսական հիմնարկում աշխատանքի նշանակվելուց հետո նրանց ժամանման մասին, նրանց վերջնական մեկնման կամ գործառույթների դադարեցման մասին և բոլոր մյուս այն փոփոխությունների մասին, որոնք ազդում են նրանց կարգավիճակի վրա, որոնք կարող են տեղի ունենալ հյուպատոսական հիմնարկում նրանց աշխատանքի ժամանակ,

բ) հյուպատոսական հիմնարկի անդամի ընտանիքի անդամ հանդիսացող և մշտապես նրա հետ ապրող անձի ժամանման և վերջնական մեկնման մասին, ինչպես նաև, հարկ եղած դեպքերում, այն մասին, որ այս կամ այն անձը դառնում է կամ դադարում է լինել ընտանիքի այդպիսի անդամ,

գ) մասնավոր տնային աշխատողների ժամանման և վերջնական մեկնման մասին, և, հարկ եղած դեպքերում, որպես այդպիսիք՝ նրանց ծառայության ընդհատման մասին,

դ) ընդունող պետությունում բնակվող անձանց վարձելու և ազատելու մասին՝ որպես հյուպատոսական հիմնարկի անդամների կամ մասնավոր տնային աշխատողների, որոնք ունեն արտոնությունների և անձեռնմխելիության իրավունք:

2. Ժամանման և վերջնական մեկնման մասին ծանուցումը պետք է արվի հնարավորինս վաղօրոք:

Բաժին 2. Հյուպատոսական գործառույթների դադարեցումը

Հոդված 25
Հյուպատոսական հիմնարկների անդամների գործառույթների դադարեցումը

Հյուպատոսական հիմնարկի անդամների գործառույթները դադարեցվում են, մասնավորապես.

ա) համաձայն ուղարկող պետության կողմից ընդունող պետությանը հղված այն մասին ծանուցման, որ նրա գործառույթները դադարեցվում են,

բ) էկզեկվատուրայի վերացման դեպքում,

գ) համաձայն ուղարկող պետությանը ընդունող պետության կողմից հղված այն մասին ծանուցման, որ ընդունող պետությունը դադարել է նրան հյուպատոսական հիմնարկի անդամ համարելուց:

Հոդված 26
Մեկնումը ընդունող պետությունից

Ընդունող պետությունը նույնիսկ զինված ընդհարման դեպքում պետք է հյուպատոսական հիմնարկի անդամներին և ընդունող պետության քաղաքացիներ չհանդիսացող մասնավոր տնային աշխատողներին, ինչպես նաև նրանց հետ ապրող նրանց ընտանիքների անդամներին, անկախ վերջիններիս քաղաքացիությունից, տա ժամանակ և պայմաններ, որոնք անհրաժեշտ են, որ նրանք կարողանան նախապատրաստվել մեկնելու և համապատասխան անդամների գործառույթները դադարեցվելուց հետո մեկնեն որքան կարելի է շուտ: Մասնավորապես, ընդունող պետությունը անհրաժեշտության դեպքում պետք է նրանց տրամադրության տակ դնի փոխադրամիջոցներ, որոնք պահանջվում են մեկնողի կամ նրանց ունեցվածքի համար, որը ձեռք է բերվել ընդունող պետությունում, և որի դուրսբերումը մեկնելու ժամանակ արգելված է:

Հոդված 27
Շինությունների և արխիվների, ինչպես նաև ուղարկող պետության շահերի պաշտպանությունը բացառիկ հանգամանքներում

1. Երկու պետությունների միջև հյուպատոսական հարաբերությունների դադարեցման դեպքում.

ա) ընդունող պետությունը, անգամ զինված ընդհարման դեպքում, պետք է հարգի և պահպանի հյուպատոսական շինությունները, ինչպես նաև հյուպատոսական հիմնարկի ունեցվածքը և հյուպատոսական արխիվը,

բ) ուղարկող պետությունը կարող է հյուպատոսական շինությունների, ինչպես նաև այնտեղ եղած ունեցվածքի և հյուպատոսական արխիվի պահպանությունը վստահել ընդունող պետության համար ընդունելի երրորդ պետության,

գ) ուղարկող պետությունը կարող է իր շահերի և իր քաղաքացիների շահերի պաշտպանությունը վստահել ընդունող պետության համար ընդունելի երրորդ պետության:

2. Հյուպատոսական հիմնարկի ժամանակավոր կամ վերջնական փակման դեպքում կիրառվում են սույն հոդվածի 1-ին կետի «ա» ենթակետի դրույթները: Դրանից բացի.

ա) եթե ուղարկող պետությունը ընդունող պետությունում չունի դիվանագիտական ներկայացուցչություն, բայց այդ պետության տարածքում ունի ուրիշ հյուպատոսական հիմնարկ, այդ հյուպատոսական հիմնարկին կարող են վստահել փակված հյուպատոսական հիմնարկի շինությունների պահպանությունը դրանցում եղած ունեցվածքի և հյուպատոսական արխիվի հետ միասին և, ընդունող պետության համաձայնությամբ, փակված հյուպատոսական հիմնարկի տարածաշրջանում հյուպատոսական գործառույթների կատարումը, կամ

բ) եթե ուղարկող պետությունը ընդունող պետության մեջ չունի ոչ դիվանագիտական ներկայացուցչություն, ոչ այլ հյուպատոսական հիմնարկ, կիրառվում են սույն հոդվածի առաջին կետի «բ» և «գ» ենթակետերը:

Գլուխ 2. Հյուպատոսական հիմնարկների, հաստիքային հյուպատոսական պաշտոնատար անձանց և հյուպատոսական հիմնարկների մյուս անդամների առավելությունները, արտոնությունները և անձեռնմխելիությունը

Բաժին 1. Հյուպատոսական հիմնարկների առավելությունները, արտոնությունները և անձեռնմխելիությունը

Հոդված 28
Հյուպատոսական հիմնարկների աշխատանքի դյուրացումը

Ընդունող պետությունը պետք է բոլոր հնարավորությունները ընձեռի հյուպատոսական հիմնարկի գործառույթները կատարելու համար:

Հոդված 29
Պետական դրոշից և զինանշանից օգտվելը

1. Ուղարկող պետությունը իրավունք ունի ընդունող պետությունում օգտվելու իր պետական դրոշից և զինանշանից՝ սույն հոդվածի դրույթներին համապատասխան:

2. Ուղարկող պետության պետական դրոշը կարող է բարձրացվել և նրա պետական զինանշանը ամրացվել հյուպատոսական հիմնարկի զբաղեցրած շենքին, ինչպես նաև հյուպատոսական հիմնարկի ղեկավարի նստավայրում և, եթե դա կապված է պաշտոնական պարտականությունների կատարման հետ, նրա փոխադրամիջոցների վրա:

3. Սույն հոդվածով նախատեսված իրավունքը իրականացնելիս պետք է ուշադրության առնել ընդունող պետության օրենքները, կանոնները և սովորույթները:

Հոդված 30

Շենքերով ապահովելը

1. Ընդունող պետությունը, իր օրենքների և կանոնների համաձայն, ուղարկող պետությունը պետք է կամ աջակցի՝ իր տարածքում ձեռք բերելու նրա հյուպատոսական հիմնարկի համար անհրաժեշտ շինություններ, կամ օգնի՝ շենքեր ստանալ այլ ուղիներով:

2. Ընդունող պետությունը, անհրաժեշտության դեպքում, պետք է նաև օգնություն ցույց տա հյուպատոսական հիմնարկին՝ հարմար շենքեր ստանալ իր անդամների համար:

Հոդված 31
Հյուպատոսական շինությունների անձեռնմխելիությունը

1. Հյուպատոսական շինություններն անձեռնմխելի են այնքանով, որքանով դա նախատեսվում է սույն հոդվածով:

2. Ընդունող պետության իշխանությունները առանց հյուպատոսական հիմնարկի, նրա կողմից նշանակված անձի կամ ուղարկող պետության դիվանագիտական ներկայացուցչության ղեկավարի համաձայնության չեն կարող մուտք գործել հյուպատոսական շինությունների այն մասը, որն օգտագործվում է բացառապես հյուպատոսական հիմնարկի աշխատանքի համար: Այնուամենայնիվ, հյուպատոսական հիմնարկի ղեկավարի համաձայնությունը ենթադրվում է հրդեհի կամ բնական այլ տարերքի դեպքում, որոնք պահանջում են պաշտպանության անհետաձգելի միջոցառումներ:

3. Սույն հոդվածի 2-րդ կետի դրույթների պահպանման պայմանով՝ ընդունող պետության վրա դրված է հյուպատոսական շինությունները ամեն տեսակի ներխուժումներից կամ վնաս հասցնելուց պաշտպանելու և հյուպատոսական հիմնարկի անդորրի ամեն տեսակի խախտումը և նրա արժանապատվության անարգումը կանխելու համար հարկ եղած բոլոր միջոցների ձեռնարկման հատուկ պարտականություն:

4. Հյուպատոսական շինությունները, դրանց կահավորանքը, հյուպատոսական հիմնարկի ունեցվածքը, ինչպես նաև փոխադրամիջոցները օգտվում են անձեռնմխելիության իրավունքից՝ պետական պաշտպանության նպատակով կամ հասարակական կարիքների համար բռնագրավման դեպքում: Վերը նշված նպատակներով շինությունների օտարման անհրաժեշտություն առաջանալիս ձեռնարկվում են բոլոր հնարավոր միջոցները հյուպատոսական գործառույթների կատարումը խախտելուց խուսափելու համար, և ուղարկող պետությանը անհապաղ վճարվում է համապատասխան և արդյունավետ փոխհատուցում:

Հոդված 32
Հյուպատոսական շինությունների ազատումը հարկերից

1. Հյուպատոսական շինությունները և հյուպատոսական հիմնարկի հաստիքային ղեկավարի նստավայրը, որոնց տերը կամ վարձակալը հանդիսանում է ուղարկող պետությունը կամ ցանկացած անձ, որը գործում է այդ պետության անունից, ազատվում են բոլոր պետական, շրջանային և մունիցիպալ հարկերից ու տուրքերից, բացառությամբ նրանցից, որոնք իրենցից ներկայացնում են սպասարկման կոնկրետ տեսակի վարձ:

2. Սույն հոդվածի 1-ին կետում նշված հարկումից ազատումը չի տարածվում այն տուրքերի և հարկերի վրա, որոնցով ընդունող պետության օրենսդրությամբ հարկվում են ուղարկող պետության կամ այդ պետության անունից գործող անձի հետ պայմանագիր կնքած անձինք:

Հոդված 33
Հյուպատոսական արխիվի և փաստաթղթերի անձեռնմխելիությունը

Հյուպատոսական արխիվները և փաստաթղթերը անձեռնմխելի են ցանկացած ժամանակ և անկախ գտնվելու վայրից:

Հոդված 34
Տեղաշարժման ազատությունը

Եթե դա չի հակասում այն գոտիների մասին օրենքներին և կանոններին, որտեղ մուտք գործելը արգելվում կամ կարգավորվում է պետական անվտանգության նկատառումներով, ընդունող պետությունը իր տարածքում պետք է ապահովի հյուպատոսական հիմնարկի բոլոր անդամների տեղաշարժման և ճանապարհորդության ազատությունը:

Հոդված 35
Հաղորդակցության ազատությունը

1. Ընդունող պետությունը պետք է թույլատրի և պահպանի բոլոր պաշտոնական նպատակներով հյուպատոսական հիմնարկի հաղորդակցության ազատությունը ուղարկող պետության կառավարության, դիվանագիտական ներկայացուցչությունների և մյուս հյուպատոսական հիմնարկների հետ ունեցած հաղորդակցությունում, որտեղ էլ դրանք գտնվելիս լինեն, հյուպատոսական հիմնարկը կարող է օգտվել բոլոր հարմար միջոցներից, ներառյալ դիվանագիտական և հյուպատոսական սուրհանդակները, դիվանագիտական և հյուպատոսական փոստը և ծածկագրված ճեպահաղորդումները: Սակայն հյուպատոսական հիմնարկը ռադիոհաղորդիչ տեղակայել և դրանից օգտվել կարող է միայն ընդունող պետության համաձայնությամբ:

2. Հյուպատոսական հիմնարկի պաշտոնական գրագրությունը անձեռնմխելի է: Պաշտոնական գրագրություն ասելով պետք է հասկանալ հյուպատոսական հիմնարկին և նրա գործառույթներին վերաբերող ամբողջ գրագրությունը:

3. Հյուպատոսական փոստը ենթակա չէ ոչ բացման, ոչ կալանավորման: Սակայն այն դեպքում, երբ նստավայր պետության իրավասու մարմինները լուրջ հիմքեր ունեն ենթադրելու, որ փոստի մեջ բացի գրագրությունից, փաստաթղթերից կամ սույն հոդվածի 4-րդ կետում թվարկված առարկաներից, պարունակվում է ինչ-որ այլ բան, ապա կարող են պահանջել, որ փոստը բացվի իրենց ներկայությամբ՝ ուղարկող պետության լիազոր ներկայացուցչի կողմից: Այն դեպքում, եթե ուղարկող պետության իշխանությունները հրաժարվեն կատարել այդ պահանջը, ապա փոստը վերստին կվերադարձվի առաքման վայր:

4. Հյուպատոսական փոստի բոլոր ծանրոցները պետք է ունենան տեսանելի արտաքին նշաններ, որոնք ցույց կտան դրանց բնույթը, և կարող են պարունակել միայն գրագրություն և փաստաթղթեր կամ բացառապես պաշտոնական օգտագործման համար նախատեսվող առարկաներ:

5. Հյուպատոսական սուրհանդակին պետք է տրվի պաշտոնական փաստաթուղթ, որը նշում է նրա կարգավիճակը և հյուպատոսական փոստը կազմող ծանրոցների քանակը: Բացառությամբ այն դեպքերի, երբ գոյություն ունի ընդունող պետության համաձայնությունը, նա չի կարող լինել ոչ ընդունող պետության քաղաքացի, ոչ էլ, եթե նա չի հանդիսանում ուղարկող պետության քաղաքացի, մի անձ, որը մշտապես բնակվում է ընդունող պետությունում: Իր գործառույթները կատարելիս նա պետք է գտնվի ընդունող պետությունում: Նա օգտվում է անձնական անձեռնմխելիությունից և ենթակա չէ ոչ ձերբակալման, ոչ էլ կալանավորման, ինչ ձևով էլ դա կատարվի:

6. Ուղարկող պետությունը, նրա դիվանագիտական ներկայացուցչությունները և հյուպատոսական հիմնարկները կարող են նշանակել ad hoc սուրհանդակներ: Այդ դեպքերում կիրառվում են նաև սույն հոդվածի 5-րդ կետի դրույթները, բացառությամբ այդտեղ հիշատակված անձեռնմխելիությունը, որոնք դադարում են գործելուց ըստ նշանակության՝ այդպիսի սուրհանդակի կողմից նրան վստահված հյուպատոսական փոստը տեղ հասցնելու պահին:

7. Հյուպատոսական փոստը կարող է վստահվել այն նավի կամ քաղաքացիական օդանավի հրամանատարին, որը ուղևորվում է նավահանգիստ կամ օդանավակայան, ուր նրա ժամանումը թույլատրված է: Նրան տրվում է պաշտոնական փաստաթուղթ, որը նշում է փոստը կազմող ծանրոցների քանակը, բայց նա չի համարվում հյուպատոսական սուրհանդակ: Տեղական իրավասու մարմինների հետ համաձայնեցնելով՝ հյուպատոսական հիմնարկը կարող է իր անդամներից մեկին ուղարկել՝ նավի կամ օդանավի հրամանատարից անմիջականորեն և առանց խոչընդոտների ընդունելու փոստը:

Հոդված 36
Հաղորդակցությունը և շփումները ուղարկող պետության քաղաքացիների հետ

1. Ուղարկող պետության քաղաքացիների վերաբերյալ հյուպատոսական գործառույթների կատարումը դյուրացնելու նպատակով.

ա) հյուպատոսական պաշտոնատար անձինք կարող են ազատորեն հաղորդակցվել ուղարկող պետության քաղաքացիների հետ և ունենալ նրանց հանդիպելու ազատ մուտք: Ուղարկող պետության քաղաքացիները նման ազատություն ունեն այն բանում, ինչը վերաբերում է նրանց հաղորդակցությանը հյուպատոսական պաշտոնատար անձանց հետ հանդիպելու հնարավորությանը,

բ) ընդունող պետության իրավասու մարմինները պետք է անհապաղ ծանուցեն ուղարկող պետության հյուպատոսական հիմնարկին այն մասին, որ նրա հյուպատոսական տարածքի սահմաններում այդ պետության որևէ քաղաքացի ձերբակալված է, գտնվում է բանտում, կալանքի տակ է կամ կալանավորված, նույնպես անհապաղ այդ մարմինների կողմից հանձնվում են հյուպատոսական հիմնարկին: Նշված մարմինները պետք է անհապաղ այդ անձին հայտնեն իր իրավունքների մասին, որոնք նա ունի սույն կետին համապատասխան,

գ) հյուպատոսական պաշտոնատար անձինք իրավունք ունեն այցելելու հավատարմագրող պետության այն քաղաքացուն՝ նրա հետ զրուցելու համար, որը գտնվում է բանտում, կալանքի տակ է կամ ձերբակալված, ինչպես նաև իրավունք ունեն գրագրություն հաստատել նրա հետ և միջոցներ ձեռնարկել նրա համար ապահովելու իրավաբանական ներկայացուցչություն: Նրանք նաև իրավունք ունեն այցելելու ուղարկող պետության ցանկացած քաղաքացու, որը գտնվում է բանտում, կալանքի տակ է կամ ձերբակալված է նրանց տարածքում՝ դատավճռի հիման վրա: Բայց և այնպես, հյուպատոսական պաշտոնատար անձինք պետք է ձեռնպահ մնան այն քաղաքացու անունից հանդես գալուց, որը գտնվում է բանտում, կալանքի տակ է կամ ձերբակալված է, եթե նա որոշակիորեն առարկում է դրա դեմ:

2. Այն իրավունքները, որոնք նշված են սույն հոդվածի 1-ին կետում, պետք է իրականացվեն ընդունող պետության օրենսդրությանը համապատասխան՝ պայմանով, սակայն, որ այդ օրենսդրությունը պետք է համահունչ լինի այն նպատակների իրականացմանը, որոնց համար էլ սահմանված են սույն հոդվածին համապատասխան տրվող իրավունքները:

Հոդված 37
Տեղեկություն մահվան, խնամակալության և հոգաբարձության մասին և նավերի ու օդանավերի վթարների մասին

Ընդունող պետության իրավասու մարմինները տեղեկություն ունենալու դեպքում պարտավոր են՝

ա) ուղարկող պետության քաղաքացու մահվան դեպքում անհապաղ այդ մասին տեղեկացնել այն հյուպատոսական հիմնարկին, որի տարածքում տեղի է ունեցել մահը,

բ) անհապաղ հյուպատոսական հիմնարկին տեղեկացնել ցանկացած այն դեպքի մասին, երբ խնամակալի կամ հոգաբարձուի նշանակումը համապատասխանում է դեռահասի կամ այլ անձի շահերին, որոնք սահմանափակ գործունակությամբ են օժտված և ուղարկող պետության քաղաքացիներ են: Սակայն նման տեղեկություն ներկայացնելը չպետք է խոչընդոտի ընդունող պետության օրենսդրության կիրառմանը այն բանում, ինչ վերաբերում է այդպիսի նշանակումներին,

գ) եթե ուղարկող պետության նավը վթարի է ենթարկվել կամ նստել է խութի վրա ընդունող պետության տարածքային կամ ներքին ջրերում, կամ եթե ուղարկող պետությունում գրանցված օդանավը վթարի է ենթարկվել ընդունող պետության տարածքում, հարկ է անհապաղ այդ մասին հաղորդել պատահարին առավել մոտ գտնվող հյուպատոսական հիմնարկին:

Հոդված 38
Հաղորդակցությունը ընդունող պետության մարմինների հետ

Հյուպատոսական պաշտոնատար անձինք իրենց գործառույթները կատարելիս կարող են դիմել.

ա) իրենց հյուպատոսական տարածաշրջանի իրավասու տեղական մարմիններին,

բ) ընդունող պետության իրավասու կենտրոնական մարմիններին, եթե դա թույլատրվում է և այն չափով, որքան դա թույլատրվում է ընդունող պետության օրենսդրությամբ և սովորույթներով կամ համապատասխան միջազգային պայմանագրերով:

Հոդված 39
Հյուպատոսական գանձումները և վճարները

1. Հյուպատոսական հիմնարկը ընդունող պետության տարածքում կարող է գանձումներ կատարել և տուրքեր վերցնել, որոնք նախատեսված են ուղարկող պետության օրենսդրությամբ:

2. Սույն հոդվածի 1-ին կետում հիշատակված գանձումների և տուրքերի ձևով հավաքվող գումարները և նման գանձումներ և տուրքեր ստանալու անդորրագրերը ընդունող պետությունում ազատվում են բոլոր հարկերից և տուրքերից:

Բաժին 2. Հյուպատոսական հաստիքային պաշտոնատար անձանց և հյուպատոսական հիմնարկների մյուս անդամների առավելությունները, արտոնությունները և անձեռնմխելիությունը

Հոդված 40
Հյուպատոսական պաշտոնատար անձանց պաշտպանությունը

Ընդունող պետությունը պարտավոր է պատշաճ հարգանքով վերաբերվել հյուպատոսական պաշտոնատար անձանց և ձեռնարկել բոլոր հարկ եղած միջոցները նրանց անձի, ազատության և արժանապատվության դեմ որևէ ոտնձգություն կանխելու ուղղությամբ:

Հոդված 41
Հյուպատոսական պաշտոնատար անձանց անձնական անձեռնմխելիությունը

1. Հյուպատոսական պաշտոնատար անձինք ենթակա չեն ոչ ձերբակալման, ոչ նախնական կալանքի՝ ոչ այլ կերպ, քան ծանր հանցագործություններ կատարելու դեպքում՝ իրավասու դատական իշխանությունների վճիռների հիման վրա:

2. Բացառությամբ սույն հոդվածի 1-ին կետում նշված դեպքերի, հյուպատոսական պաշտոնատար անձինք չեն կարող բանտարկվել և ենթակա չեն իրենց ազատության ոչ մի այլ ձևի սահմանափակման ոչ այլ կերպ, քան ի կատարումն օրինական ուժի մեջ մտած դատական վճիռների:

3. Եթե հյուպատոսական պաշտոնատար անձի նկատմամբ հարուցվել է քրեական գործ, այդ անձը պետք է ներկայանա իրավասու մարմիններին: Այնուամենայնիվ, գործի քննության ժամանակ նրան պետք է ցույց տրվի հարգանք, նկատի ունենալով նրա պաշտոնական դիրքը, և, սույն հոդվածի կետում նախատեսված դեպքերից բացի, պետք է, որքան հնարավոր է, քիչ խոչընդոտներ հարուցվեն նրա կողմից իր հյուպատոսական գործառույթները կատարվելիս: Երբ անհրաժեշտություն առաջանա հյուպատոսական պաշտոնատար անձին կալանել սույն հոդվածի 1-ին կետին համապատասխան, նրա դեմ դատական հետաքննությունը պետք է սկսվի հնարավորին չափ կարճ ժամկետում:

Հոդված 42
Ձերբակալման, նախնական կալանքի կամ դատական հետաքննության մասին ծանուցումը

Հյուպատոսական անձնակազմի որևէ անդամի ձերբակալման կամ նախնական կալանքի կամ նրա դեմ քրեական գործ հարուցելու դեպքում ընդունող պետությունը անմիջապես այդ մասին տեղյակ է պահում հյուպատոսական հիմնարկի ղեկավարին: Եթե վերջինս ինքն է ենթարկվում այդպիսի միջոցների, ապա ընդունող պետությունը այդ մասին տեղյակ է պահում ուղարկող պետությանը՝ դիվանագիտական ուղիներով:

Հոդված 43
Անձեռնմխելիություն ընդդատությունից

1. Հյուպատոսական պաշտոնատար անձինք և հյուպատոսական ծառայողները ենթակա չեն ընդունող պետության դատական և վարչական մարմինների ընդդատությանը հյուպատոսական գործառույթներ կատարելիս իրենց կողմից արված գործողությունների համար:

2. Սակայն սույն հոդվածի 1-ին կետի դրույթները չեն կիրառվում քաղաքացիական այնպիսի հայցի վերաբերյալ՝

ա) որը բխում է հյուպատոսական պաշտոնատար անձի կամ հյուպատոսական ծառայողի կնքած պայմանագրից, որի համաձայն նրանք ուղղակի կամ անուղղակի իրենց վրա չեն ստանձնել որպես ուղարկող պետության գործակալի պարտավորություններ, կամ

բ) որը վերաբերում է երրորդ կողմին այն վնասի համար, որը ընդունող պետությունում հասցվել է ճանապարհային փոխադրամիջոցների, նավի կամ ինքնաթիռի առաջացրած դժբախտ պատահարի հետևանքով:

Հոդված 44
Ցուցմունքներ տալու պարտականությունը

1. Հյուպատոսական հիմնարկի անդամները կարող են կանչվել որպես վկաներ դատական և վարչական գործերի վարման ժամանակ: Հյուպատոսական ծառայողը կամ սպասարկման անձնակազմի անդամը, բացառությամբ սույն հոդվածի 3-րդ կետում հիշատակված դեպքերի, չի կարող հրաժարվել ցուցմունքներ տալուց: Եթե

հյուպատոսական պաշտոնատար անձը հրաժարվում է ցուցմունքներ տալուց, ապա նրա նկատմամբ չի կարող գործադրվել ստիպողական կամ պատժի որևէ միջոց:

2. Այն մարմինը, որին անհրաժեշտ է հյուպատոսական պաշտոնատար անձի ցուցմունքը, պետք է խուսափի այդ անձի կողմից իր գործառույթները կատարելուն խոչընդոտելուց: Այդ մարմինը կարող է, երբ դա հնարավոր է, ցուցմունքները լսել այդ անձի տանը կամ հյուպատոսական հիմնարկում կամ նրանից ընդունել գրավոր ցուցմունքներ:

3. Հյուպատոսական հիմնարկի անդամները պարտավոր չեն ցուցմունքներ տալ իրենց կողմից կատարվող գործառույթների հետ կապված հարցերի կապակցությամբ կամ ներկայացնել իրենց գործառույթներից վերաբերող պաշտոնական գրագրություն և փաստաթղթեր: Նրանք նաև պարտավոր չեն տալ ուղարկող պետության օրենսդրությունը պարզաբանող ցուցմունքներ:

Հոդված 45
Արտոնություններից և անձեռնմխելիությունից հրաժարվելը

1. Ուղարկող պետությունը կարող է հրաժարվել հյուպատոսական հիմնարկի անդամների 41-րդ, 43-րդ և 44-րդ հոդվածներում նախատեսված ցանկացած արտոնությունից և անձեռնմխելիությունից:

2. Բացի սույն հոդվածի 3-րդ կետում նախատեսված դեպքերից, նման հրաժարումը մշտապես պետք է լինի որոշակիորեն արտահայտված և դրա մասին ընդունող պետությանը պետք է հաղորդվի գրավոր:

3. Հյուպատոսական պաշտոնատար անձի կամ հյուպատոսական ծառայողի կողմից գործի հարցումը այն դեպքում, երբ նա կարող էր օգտվել ընդդատության անձեռնմխելիությունից, նրան զրկում է հիմնական հայցի հետ անմիջականորեն կապված որևէ հանդիպակաց հայցի վերաբերյալ ընդդատության անձեռնմխելիությունը վկայակոչելու իրավունքից:

4. Քաղաքացիական կամ վարչական գործերի վերաբերյալ ընդդատության անձեռնմխելիությունից հրաժարվելը չի նշանակում հրաժարում դատական վճռի հետևանք հանդիսացող հարկադիր գործողությունների անձեռնմխելիությունից. այդպիսի գործողությունների վերաբերյալ անհրաժեշտ է առանձին հրաժարում:

Հոդված 46
Օտարերկրացիներին գրանցելուց և բնակության թույլատվություն տալուց հրաժարվելը

1. Հյուպատոսական պաշտոնական անձինք, հյուպատոսական ծառայողները և նրանց ընտանիքների՝ նրանց հետ բնակվող անդամները ազատվում են բոլոր այն պարտականություններից, որոնք նախատեսվում են ընդունող պետության օրենքներով և կանոններով օտարերկրացիներին գրանցելու և բնակության համար թույլատվություն տալու վերաբերյալ:

2. Սույն հոդվածի 1-ին կետի դրույթները, սակայն, չեն կիրառվում այն հյուպատոսական ծառայողի նկատմամբ, որը չի հանդիսանում ուղարկող պետության մշտական ծառայող, կամ որը եկամուտ ստանալու նպատակով ընդունող պետությունում զբաղվում է մասնավոր գործունեությամբ, ինչպես նաև՝ այդպիսի ծառայողի ընտանիքի ցանկացած անդամի նկատմամբ:

Հոդված 47
Աշխատանքի համար թույլատվություն ստանալուց ազատվելը

1. Հյուպատոսական հիմնարկի անդամները այն բանում, ինչ վերաբերում է ուղարկող պետության համար աշխատանք կատարելուն, ազատվում են աշխատանքի համար թույլատվություն ստանալու հետ կապված ամեն տեսակի

պարտականություններից, որոնք սահմանված են օտարերկրացիներին աշխատանքի վարձելու մասին ընդունող պետության օրենքներով և կանոններով:

2. Հյուպատոսական պաշտոնատար անձանց և հյուպատոսական ծառայողների մասնավոր տնային աշխատողները, եթե նրանք ընդունող պետությունում եկամուտ ստանալու նպատակով չեն զբաղվում մեկ այլ մասնավոր գործունեությամբ, ազատվում են այն պարտականություններից, որոնց մասին ասվում է սույն հոդվածի 1-ին կետում:

Հոդված 48
Սոցիալական ապահովությանը վերաբերող բացառումը

1. Բացառությամբ սույն հոդվածի 3-րդ կետում նախատեսված դեպքերի, սոցիալական ապահովության մասին ընդունող պետության մեջ գործող որոշումները չեն տարածվում հյուպատոսական հիմնարկի անդամների և նրանց ընտանիքների այն անդամների վրա, որոնք բնակվում են նրանց հետ, այն բանում, ինչ վերաբերում է ուղարկող պետության համար կատարվող աշխատանքին:

2. Սույն հոդվածի 1-ին կետում նախատեսվող բացառումը տարածվում է նաև մասնավոր տնային աշխատողների վրա, որոնք բացառապես գտնվում են հյուպատոսական հիմնարկի աշխատողների մոտ ծառայության մեջ՝ պայմանով.

ա) որ նրանք չեն հանդիսանում ընդունող պետության քաղաքացիներ և այնտեղ մշտապես չեն բնակվում, և

բ) որ նրանց վրա տարածվում են սոցիալական ապահովության մասին ուղարկող պետությունում կամ երրորդ պետությունում գործող որոշումները:

3. Հյուպատոսական հիմնարկի այն աշխատողները, որոնք վարձում են անձանց, որոնց վրա չեն տարածվում սույն հոդվածի 2-րդ կետում նախատեսված բացառումները, պետք է կատարեն սոցիալական ապահովության մասին ընդունող պետությունում գործող որոշումներով վարձակալների վրա դրված պարտականությունները:

Հոդված 49
Հարկային բացառումներ

1. Հյուպատոսական պաշտոնատար անձինք և հյուպատոսական ծառայողները, ինչպես նաև նրանց հետ ապրող նրանց ընտանիքների անդամները ազատվում են անհատական և գույքային, պետական, շրջանային և մունիցիպալ բոլոր հարկերից և տուրքերից, բացառությամբ՝

ա) անուղղակի հարկերի, որոնք սովորաբար մտնում են ապրանքների և սպասարկման արժեքի մեջ,

բ) ընդունող պետության տարածքում գտնվող մասնավոր անշարժ գույքի վրա դրվող տուրքերի և հարկերի՝ 32-րդ հոդվածի դրույթներում նախատեսվող բացառումներով հանդերձ,

գ) ժառանգված գույքի վրա դրվող հարկերի կամ ժառանգելու վրա դրվող տուրքերի կամ ընդունող պետության կողմից գույքի փոխանցման համար մասհանվող հարկերի՝ 5-րդ հոդվածի «բ» կետի դրույթներում նախատեսված բացառումներով հանդերձ,

դ) մասնավոր եկամուտի վրա դրվող տուրքերի և հարկերի, ներառյալ այն կապիտալից մասհանվող եկամուտները, որի աղբյուրը գտնվում է ընդունող պետությունում, և ընդունող պետությունում առևտրային ու ֆինանսական ձեռնարկություններում կապիտալ ներդրումների վրա դրվող հարկերի,

ե) այն հարկերի, որոնք գանձվում են սպասարկման կոնկրետ տեսակների համար,

զ) գրանցման, դատական և քարտարանային տուրքերի համար, հիպոթեքային գանձումների, դրոշմատուրքերի՝ 32-րդ հոդվածի դրույթներում նախատեսված բացառումներով հանդերձ:

2. Սպասարկող անձնակազմի անդամները ազատվում են իրենց աշխատանքի դիմաց ստացվող աշխատավարձի համար հարկերից և տուրքերից:

3. Այսպիսի անձանց վարձած հյուպատոսական հիմնարկի անդամները, որոնց աշխատավարձը ընդունող պետությունում ազատված չէ եկամտահարկից, կատարում են այդ պետության օրենքներով և կանոններով վարձակալների վրա դրված պարտականությունները այն բանում, ինչը վերաբերում է եկամտահարկի գանձմանը:

Հոդված 50
Ազատում մաքսային տուրքերից և ստուգումներից

1. Ընդունող պետությունը, նրանում ընդունված օրենքներին և կանոններին համապատասխան, թույլատրում է ներմուծել և ազատում է բոլոր մաքսային տուրքերից, հարկերից ու դրա հետ կապված գանձումներից, բացառությամբ պահպանման, տեղափոխման և նման կարգի ծառայությունների համար կատարվող գանձումների՝

ա) հյուպատոսական հիմնարկի պաշտոնական օգտագործման համար նախատեսված առարկաները,

բ) հյուպատոսական պաշտոնատար անձի կամ նրա ընտանիքի՝ նրա հետ միասին ապրող անդամների անձնական օգտագործման համար նախատեսված առարկաները, ներառյալ այն առարկաները, որոնք նախատեսված են նրա առտնին օգտագործման համար:

Սպառողական ապրանքների քանակությունը չպետք է գերազանցի համապատասխան անձանց կողմից անմիջական սպառման համար անհրաժեշտը:

2. Հյուպատոսական ծառայողները օգտվում են սույն հոդվածի 1-ին կետում նախատեսված արտոնություններից և ազատումներից այն առարկաների նկատմամբ, որոնք նրանք ներմուծել են սկզբնական տեղավորման ժամանակ:

3. Հյուպատոսական պաշտոնատար անձանց և նրանց ընտանիքների՝ նրանց հետ միասին ապրող անդամների անձնական ուղեբեռը, որը տարվում է այդ անձանց հետ միասին, ազատվում է զննությունից: Այդ ուղեբեռը կարող է զննության ենթարկվել միայն այն դեպքում, եթե լուրջ հիմքեր կան ենթադրելու, որ նրանում կան այլ առարկաներ, քան սույն 1-ին կետի «բ» ենթակետում նշվածներն են, կամ էլ՝ առարկաներ, որոնց ներմուծումը և արտահանումը արգելված են ընդունող պետության օրենքներով ու կանոններով, կամ էլ՝ առարկաներ, որոնք ենթակա են նրա կարանտինային օրենքների և կանոնների գործողությանը: Այդ զննությունը պետք է տարվի համապատասխան պաշտոնատար անձի կամ նրա ընտանիքի անդամի ներկայությամբ:

Հոդված 51
Հյուպատոսական հիմնարկի անդամի և նրա ընտանիքի անդամի ժառանգված ունեցվածքը

Հյուպատոսական հիմնարկի անդամի կամ նրա ընտանիքի՝ նրա հետ միասին ապրող անդամի մահվան դեպքում ընդունող պետությունը՝

ա) թույլատրում է մահացածին պատկանած շարժական գույքի արտահանումը, բացառությամբ այն գույքի, որը ձեռք է բերվել ընդունող պետությունում, և որի արտահանումը եղել է արգելված նրա մահվան պահին,

բ) չի գանձում ժառանգության ոչ մի պետական, շրջանային կամ մունիցիպալ հարկ այն շարժական գույքից, որը ընդունող պետության տարածքում է մահացած անձի՝ որպես հյուպատոսական հիմնարկի անդամի կամ նրա ընտանիքի անդամի՝ բացառապես այդ պետությունում գտնվելու կապակցությամբ:

Հոդված 52
Ազատում անձնական պարտավորություններից և հարկումից

Ընդունող պետությունը պարտավոր է հյուպատոսական հիմնարկի անդամներին և նրանց ընտանիքների՝ նրանց հետ միասին ապրող անդամներին ազատել բոլոր աշխատանքային և պետական պարտավորություններից՝ անկախ դրանց բնույթից, ինչպես նաև այն պարտավորություններից, ինչպիսիք են բռնագրավումը, ռազմատուգանքը և զինվորներին օթևան տրամադրելը:

Հոդված 53
Հյուպատոսական արտոնությունների և անձեռնմխելիության սկիզբը և ավարտը

1. Հյուպատոսական հիմնարկի յուրաքանչյուր անդամ օգտվում է սույն Կոնվենցիայում նախատեսված արտոնություններից ընդունող պետության տարածք՝ իր նշանակման վայր ուղևորվելու, մուտք գործելու պահից կամ, եթե նա արդեն գտնվում է այդ տարածքում, այն պահից, երբ նա ձեռնամուխ է եղել հյուպատոսական հիմնարկում իր պարտականությունների կատարմանը:

2. Հյուպատոսական հիմնարկի անդամի ընտանիքի՝ նրա հետ միասին ապրող անդամները և նրա մասնավոր տնային աշխատողները օգտվում են սույն Կոնվենցիայում նախատեսված արտոնություններից և անձեռնմխելիությունից նրան սույն հոդվածի 1-ին կետի համաձայն արտոնություններ և անձեռնմխելիություն տրամադրելու պահից կամ էլ այն պահից, երբ նրանք դարձել են նրա ընտանիքի անդամները կամ նրա մասնավոր տնային աշխատողները՝ կախված այն բանից, թե որն է տեղի ունեցել ավելի ուշ:

3. Երբ հյուպատոսական հիմնարկի անդամի գործառույթները դադարում են, ապա նրա արտոնություններն ու անձեռնմխելիությունը, ինչպես և նրա ընտանիքի՝ նրա հետ միասին ապրող անդամի կամ նրա մասնավոր տնային աշխատողի արտոնություններն ու անձեռնմխելիությունը սովորաբար դադարում են այն պահին, երբ տվյալ անձը հեռանում է ընդունող պետությունից, կամ էլ դա անելու համար ընդունելի ժամկետի լրանալուց հետո՝ կախված այն բանից, թե այդ պահից որը կնախորդի, սակայն մինչև այդ պահը դրանք շարունակում են գոյություն ունենալ անգամ զինված ընդհարման դեպքում: Ինչ վերաբերում է սույն հոդվածի 2-րդ կետում հիշատակված անձանց, նրանց արտոնություններն ու անձեռնմխելիությունը դադարում են, երբ այդ անձինք դադարում են լինել հյուպատոսական հիմնարկի անդամի ընտանիքի անդամներ կամ թողնում են իրենց ծառայությունը նրա մոտ, սակայն հետևյալ վերապահումներով. եթե այդ անձինք մտադիր են ընդունելի ժամկետում հեռանալ ընդունող պետությունից, ապա նրանց արտոնություններն ու անձեռնմխելիությունը պահպանվում են մինչև մեկնելու պահը:

4. Սակայն հյուպատոսական պաշտոնատար անձի կամ հյուպատոսական ծառայողի կողմից իր գործառույթներն իրականացնելիս կատարվող գործողությունների նկատմամբ ընդդատության անձեռնմխելիությունը շարունակում է գոյություն ունենալ առանց ժամկետի սահմանափակման:

5. Հյուպատոսական հիմնարկի անդամի մահվան դեպքում նրա ընտանիքի՝ նրա հետ միասին ապրող անդամները շարունակում են օգտվել իրենց տրված արտոնություններից և անձեռնմխելիությունից մինչև ընդունող պետությունից հեռանալը կամ մինչև հեռանալու համար անհրաժեշտ ընդունելի ժամկետի լրանալը՝ կախված այն բանից, թե այդ պահերից որը կնախորդի:

Հոդված 54
Երրորդ պետությունների պարտականությունները

1. Եթե հյուպատոսական պաշտոնատար անձը իր նշանակման վայրը ուղևորվելիս կամ իր պաշտոնատեղը վերադառնալիս կամ էլ ուղարկող պետություն վերադառնալիս երթևեկում է երրորդ պետության տարածքով կամ գտնվում է իրեն մուտքի արտոնագիր (եթե այն անհրաժեշտ է) տված երրորդ պետության տարածքում, այդ երրորդ պետությունը նրան տրամադրում է սույն Կոնվենցիայի այլ հոդվածներով նախատեսված անձեռնմխելիությունը, որը կարող է պահանջվել նրա երթևեկության կամ վերադարձը ապահովելու համար: Դա տարածվում է նրա ընտանիքի՝ նրա հետ միասին ապրող և այդպիսի արտոնություններից ու անձեռնմխելիությունից օգտվող անդամների վրա, երբ նրանք ուղևորվում են հյուպատոսական պաշտոնատար անձի հետ միասին կամ առանձին՝ նրան միանալու կամ ուղարկող պետություն վերադառնալու նպատակով:

2. Սույն հոդվածի 1-ին կետում նշված հանգամանքներում երրորդ պետությունները չպետք է խոչընդոտեն իրենց պետության տարածքով հյուպատոսական հիմնարկի այլ անդամների և նրանց հետ միասին ապրող նրանց ընտանիքների անդամների երթևեկելուն:

3. Երրորդ պետությունները տարանցումով պաշտոնական փոստային առաքումների և այլ պաշտոնական հաղորդակցությունների համար, ներառյալ կոդավորված կամ ծածկագիր ուղերձները, պետք է ապահովեն նույնպիսի ազատություն և պաշտպանություն, ինչպիսիք, սույն Կոնվենցիային համապատասխան, պետք է տրամադրվեն ընդունող պետության կողմից:

Նրանք պետք է հյուպատոսական սուրհանդակներին, որոնց տրված են մուտքի արտոնագրեր /եթե այդպիսիք անհրաժեշտ են/, ինչպես և տարանցմամբ ուղևորվող հյուպատոսական փոստին տրամադրեն նույնպիսի անձեռնմխելիություն և պաշտպանություն, ինչպիսիք, սույն Կոնվենցիային համապատասխան, պարտավոր է տրամադրել ընդունող պետությունը:

4. Երրորդ պետությունների՝ սույն հոդվածի 1-ին, 2-րդ և 3-րդ կետերում նախատեսված պարտավորությունները տարածվում են նաև այդ կետերում համապատասխանաբար հիշատակված անձանց և այն պաշտոնական հաղորդագրությունների և հյուպատոսական փոստի վրա, որոնց գտնվելը 3-րդ պետության տարածքում պայմանավորված է ֆորս մաժորային հանգամանքներով:

Հոդված 55
Ընդունող պետության օրենքները և կանոնները հարգելը

1. Արտոնություններից և անձեռնմխելիությունից օգտվող բոլոր անձինք պարտավոր են, ոչ ի վնաս իրենց արտոնությունների և անձեռնմխելիության, հարգել ընդունող պետության օրենքներն ու կանոնները: Նրանք նաև պարտավոր են չմիջամտել այդ պետության ներքին գործերին:

2. Հյուպատոսական շինությունները չպետք է օգտագործվեն հյուպատոսական գործառույթներին անհամատեղելի նպատակներով:

3. Սույն հոդվածի 2-րդ կետի դրույթները չեն բացառում գրասենյակների և այլ մարմինների և հիմնարկների տեղակայումը շինության այն մասում, ուր գտնվում են հյուպատոսական շինությունները՝ պայմանով, որ այդպիսի գրասենյակներին հատկացված շինությունները առանձնացված լինեն հյուպատոսական հիմնարկի կողմից օգտագործվող շինություններից: Այդ դեպքում նշված գրասենյակները չեն հանդիսանում հյուպատոսական շինության մաս՝ սույն Կոնվենցիային համաձայն:

Հոդված 56
Ապահովագրությունը երրորդ անձանց պատճառած վնասից

Հյուպատոսական հիմնարկի անդամները պետք է պահպանեն ընդունող պետության օրենքներով և կանոններով նախատեսված բոլոր պահանջները՝ կապված

ապահովագրման հետ այն վնասից, որը կարող է պատճառվել երրորդ անձանց ցանկացած ճանապարհային փոխադրամիջոցի, նավի կամ ինքնաթիռի օգտագործման հետևանքով:

Հոդված 57
Հատուկ դրույթներ եկամուտներ ստանալու նպատակ հետապնդող մասնավոր գործունեության վերաբերյալ

1. Հյուպատոսական հաստիքային պաշտոնատար անձինք ընդունող պետությունում չպետք է զբաղվեն որևէ մասնագիտական կամ առևտրային գործունեությամբ՝ անձնական եկամուտներ ստանալու նպատակով:

2. Սույն գլխում նախատեսված արտոնությունները և անձեռնմխելիությունը չեն տրվում՝

ա) հյուպատոսական այն ծառայողներին կամ սպասարկող անձնակազմի աշխատողներին, որոնք ընդունող պետությունում զբաղվում են մասնավոր գործունեությամբ՝ եկամուտներ ստանալու նպատակով,

բ) սույն կետի «ա» ենթակետում նշված անձի ընտանիքի անդամներին կամ նրա մասնավոր տնային աշխատողներին,

գ) հյուպատոսական հիմնարկի աշխատողի ընտանիքի այն անդամներին, որոնք ընդունող պետությունում զբաղվում են մասնավոր գործունեությամբ՝ եկամուտներ ստանալու նպատակով:

Գլուխ 3. Հյուպատոսական պատվավոր պաշտոնատար անձանց և նման անձանց կողմից գլխավորվող հյուպատոսական հիմնարկների նկատմամբ կիրառվող ռեժիմը

Հոդված 58
Ընդհանուր դրույթներ առավելությունների, արտոնությունների և անձեռնմխելիության վերաբերյալ

1. Սույն Կոնվենցիայի 28-րդ, 29-րդ, 30-րդ, 34-րդ, 36-րդ, 37-րդ, 38-րդ, և 39-րդ հոդվածները, 54-րդ հոդվածի 3-րդ կետը և 55-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ կետերը տարածվում են հյուպատոսական պատվավոր պաշտոնական անձանց կողմից գլխավորվող հյուպատոսական հիմնարկների վրա: Ի հավելումն դրան՝ հյուպատոսական նման հիմնարկների առավելությունները, արտոնությունները և անձեռնմխելիությունը կարգավորվում են 59-րդ, 60-րդ, 61-րդ և 62-րդ հոդվածներով:

2. Կոնվենցիայի 42-րդ և 43-րդ հոդվածները, 44-րդ հոդվածի 3-րդ կետը, 45-րդ և 53-րդ հոդվածները և 55-րդ հոդվածի 1-ին կետը տարածվում են հյուպատոսական պատվավոր պաշտոնատար անձանց վրա: Ի հավելումն դրան՝ հյուպատոսական նման պաշտոնատար անձանց առավելությունները, արտոնությունները և անձեռնմխելիությունը կարգավորվում են 63-րդ, 64-րդ, 65-րդ, 66-րդ, և 67-րդ հոդվածներով:

3. Սույն Կոնվենցիայով նախատեսվող արտոնությունները և անձեռնմխելիությունը չեն տրվում հյուպատոսական պատվավոր պաշտոնատար անձի ընտանիքի անդամներին կամ այն հյուպատոսական ծառայողին, որն աշխատում է հյուպատոսական պատվավոր պաշտոնատար անձի կողմից գլխավորող հյուպատոսական հիմնարկում:

4. Հյուպատոսական փոստի փոխանակումը հյուպատոսական պատվավոր պաշտոնատար անձանց կողմից գլխավորվող և տարբեր պետություններում գտնվող երկու հյուպատոսական հիմնարկների միջև չի թույլատրվի առանց երկու համապատասխան ընդունող պետությունների համաձայնության:

Հոդված 59
Հյուպատոսական շինությունների պաշտպանությունը

Ընդունող պետությունը պարտավոր է ձեռնարկել բոլոր անհրաժեշտ միջոցները հյուպատոսական պատվավոր պաշտոնատար անձի կողմից գլխավորվող հյուպատոսական հիմնարկի հյուպատոսական շինությունները ամեն կարգի ներխուժումից կամ վնասից պաշտպանելու և հյուպատոսական հիմնարկի անդորրի խանգարման կամ նրա արժանապատվության վիրավորման ամեն մի փորձ կանխարգելելու համար:

Հոդված 60
Հյուպատոսական շինությունների ազատումը հարկումից

1. Հյուպատոսական պատվավոր պաշտոնատար անձի կողմից գլխավորվող հյուպատոսական հիմնարկի հյուպատոսական շինությունները, որոնց տերը կամ վարձակալը ուղարկող պետությունն է, ազատվում են բոլոր պետական, շրջանային և մունիցիպալ հարկերից և տուրքերից, բացառությամբ այնպիսիներին, որոնք իրենցից ներկայացնում են վճար սպասարկման կոնկրետ տեսակների դիմաց:

2. Սույն հոդվածի 1-ին կետում նշված ազատումը հարկերից չի տարածվում նման կարգի տուրքերի և հարկերի վրա, եթե, ընդունող պետության օրենքների և կանոնների համաձայն, դրանք պետք է վճարվեն ուղարկող պետության հետ պայմանագիր կնքած անձի կողմից:

Հոդված 61
Հյուպատոսական արխիվի և փաստաթղթերի անձեռնմխելիությունը

Հյուպատոսական պատվավոր պաշտոնատար անձի կողմից գլխավորվող հյուպատոսական հիմնարկի հյուպատոսական արխիվը և փաստաթղթերն անձեռնմխելի են ամեն ժամանակ և անկախ դրանց գտնվելու վայրից՝ պայմանով, որ դրանք պահվեն առանձին այլ թղթերից և փաստաթղթերից և, այդ թվում, հյուպատոսական հիմնարկի ղեկավարի և նրա հետ աշխատող ցանկացած անձի մասնավոր նամակներից, ինչպես նաև վերջիններիս մասնագիտությանը կամ զբաղմունքին վերաբերող նյութերից, գրքերից և փաստաթղթերից:

Հոդված 62
Ազատումը մաքսային տուրքերից

Ընդունող պետությունը, գործելով նրանում ընդունված օրենքներին և կանոններին համապատասխան, թույլատրում է ներմուծել և ազատում է բոլոր մաքսային տուրքերի և դրա հետ կապված գանձումների վճարումից, բացառությամբ պահման, տեղափոխման և նման կարգի ծառայությունների դիմաց գանձումների, հետևյալ առարկաները՝ պայմանով, որ դրանք նախատեսված լինեն հյուպատոսական հիմնարկի պաշտոնական օգտագործման համար. պետական զինանշաններ, դրոշներ, ցուցանակներ, կնիքներ և դրոշմակնիքներ, գրքեր, պաշտոնական տպագիր նյութեր, գրասենյակային կահույք, գրասենյակային սարքավորում և այլ նման առարկաներ, որոնք հյուպատոսական հիմնարկը ստանում է ուղարկող պետությունից կամ վերջինիս պահանջով:

Հոդված 63
Քրեական գործեր

Եթե հյուպատոսական պատվավոր պաշտոնատար անձի դեմ քրեական գործ է հարուցվում, այդ անձը պետք է ներկայանա իրավասու մարմիններին: Այնուամենայնիվ, գործի վարույթի ընթացքում նրա նկատմամբ պետք է հարգանք ցուցաբերվի, նկատի առնելով նրա պաշտոնական դիրքը, և, բացառությամբ այն դեպքերի, երբ նա կալանավորված կամ ձերբակալված է, պետք է հնարավորին չափ քիչ խոչընդոտներ հարուցվեն նրա կողմից հյուպատոսական գործառույթները կատարվելու ժամանակ: Երբ անհրաժեշտություն առաջանա կալանքի ենթարկել հյուպատոսական պատվավոր պաշտոնատար անձին, դատական գործը նրա դեմ պետք է սկսվի հնարավորին չափ կարճ ժամկետում:

Հոդված 64
Հյուպատոսական պատվավոր պաշտոնատար անձանց պաշտպանությունը

Ընդունող պետությունը պարտավոր է հյուպատոսական պատվավոր պաշտոնատար անձին տրամադրել այնպիսի պաշտպանություն, որը կարող է պահանջվել նրա պաշտոնական դիրքի համար:

Հոդված 65
Ազատում օտարերկրացիների գրանցումից և բնակության թույլատվություն ստանալուց

Հյուպատոսական պատվավոր պաշտոնատար անձինք, բացի նրանցից, ովքեր ընդունող պետությունում զբաղվում են ցանկացած մասնագիտական կամ առևտրային գործունեությամբ՝ անձնական եկամուտներ ստանալու նպատակով, ազատվում են բոլոր այն պարտականություններից, որոնք հարկադրվում են ընդունող պետության օրենքներով և կանոններով՝ օտարերկրացիների գրանցման և բնակության թույլատվություն ստանալու առնչությամբ:

Հոդված 66
Ազատումը հարկումից

Հյուպատոսական պատվավոր պաշտոնատար անձը ազատվում է բոլոր հարկերից և տուրքերից, այն վարձատրությունից և աշխատավարձից, որոնք նա ուղարկող պետությունից ստանում է հյուպատոսական գործառույթները կատարելու համար:

Հոդված 67
Անձնական պարտավորություններից և հարկումից ազատելը

Ընդունող պետությունը հյուպատոսական պատվավոր պաշտոնատար անձանց պետք է ազատի բոլոր աշխատանքային և պետական պարտավորություններից՝ անկախ դրանց բնույթից, ինչպես նաև զինվորական պարտավորություններից, ինչպիսիք են բռնագրավումը, ռազմատուգանքը և զինվորական օթևան տրամադրելը:

Հոդված 68
Հյուպատոսական պատվավոր պաշտոնատար անձանց ինստիտուտի ֆակուլտատիվ բնույթը

Յուրաքանչյուր պետություն ազատ է վճռել, թե ինքը արդյոք կնշանակի՞ կամ կընդունի՞ հյուպատոսական պատվավոր պաշտոնատար անձանց:

Գլուխ 4. Ընդհանուր դրույթներ

Հոդված 69
Հյուպատոսական հիմնարկների ղեկավարներ չհանդիսացող հյուպատոսական գործակալները

1. Յուրաքանչյուր պետություն ազատ է վճռել, թե ինքը արդյոք կհիմնի՞ կամ կթույլատրի՞ հիմնել հյուպատոսական գործակալություններ, որոնք գլխավորում են հավատարմագրող պետության կողմից հյուպատոսական հիմնարկների ղեկավար չնշանակված հյուպատոսական գործակալները:

2. Այն պայմանները, որոնցում սույն հոդվածի 1-ին կետում հիշատակված հյուպատոսական գործակալությունները կարող են կատարել իրենց գործառույթները, ինչպես նաև այն արտոնությունները և անձեռնմխելիությունը, որոնցից կարող են օգտվել դրանք գլխավորող հյուպատոսական գործակալները, սահմանվում են ուղարկող պետության և ընդունող պետության միջև եղած պայմանավորվածության համաձայն:

Հոդված 70
Հյուպատոսական գործառույթների կատարումը դիվանագիտական ներկայացուցչությունների կողմից

1. Սույն Կոնվենցիայի դրույթները կիրառվում են նաև այն չափով, որ չափով դա բխում է ենթատեքստից՝ հյուպատոսական գործառույթները դիվանագիտական ներկայացուցչության կողմից կատարվելու դեպքում:

2. Դիվանագիտական ներկայացուցչության այն աշխատակիցների ազգանունները, որոնք նշանակված են հյուպատոսական բաժնում, կամ որոնց մի այլ կերպով հանձնարարված է ներկայացուցչության հյուպատոսական գործառույթների կատարումը, հայտնվում են ընդունող պետության արտաքին գործերի նախարարությանը կամ այդ նախարարության կողմից նշված մարմնին:

3. Հյուպատոսական գործառույթները կատարելիս դիվանագիտական ներկայացուցչությունը կարող է դիմել՝

ա) հյուպատոսական տարածաշրջանի տեղական իշխանություններին,

բ) ընդունող պետության կենտրոնական իշխանություններին, եթե դա թույլ են տալիս ընդունող պետության օրենքները, կանոնները և սովորույթները կամ համապատասխան միջազգային համաձայնագրերը:

4. Սույն հոդվածի 2-րդ կետում նշված դիվանագիտական ներկայացուցչության անդամների արտոնությունները և անձեռնմխելիությունը շարունակում են կարգավորվել միջազգային իրավունքի՝ դիվանագիտական հարաբերություններին վերաբերող նորմերով:

Հոդված 71
Ընդունող պետության քաղաքացիները և այնտեղ մշտապես բնակվող անձինք

1. Եթե հյուպատոսական պաշտոնատար անձանց, որոնք ընդունող պետության քաղաքացի են կամ մշտապես բնակվում են այնտեղ, ընդունող պետությունը չի տրամադրում լրացուցիչ առավելություններ, արտոնություններ և անձեռնմխելիություն, նրանք օգտվում են միայն ընդդատության անձեռնմխելիությունից և անձնական անձեռնմխելիությունից, իրենց գործառույթների կատարման ընթացքում իրականացվող պաշտոնական գործողությունների առումով, և 44-րդ հոդվածի 4-րդ կետում նախատեսված արտոնություններից: Այդ պաշտոնատար անձանց նկատմամբ ընդունող պետությունը պարտավոր է նաև պահպանել 42-րդ հոդվածում շարադրված պայմանները: Եթե այդպիսի հյուպատոսական պաշտոնատար անձի դեմ քրեական գործ է հարուցվում, ապա դատաքննությունը, բացառությամբ այն դեպքերի, երբ այդ

անձը կալանավորված կամ ձերբակալված է, պետք է անցկացվի այնպես, որ հնարավորին չափ քիչ խոչընդոտվի հյուպատոսական գործառույթների կատարումը:

2. Հյուպատոսական հիմնարկի մյուս անդամները, որոնք ընդունող պետության քաղաքացի են կամ մշտապես բնակվում են այնտեղ, և նրանց ընտանիքի անդամները, ինչպես նաև սույն հոդվածի 1-ին կետում նշված հյուպատոսական պաշտոնատար անձանց ընտանիքների անդամները օգտվում են առավելություններից, արտոնություններից և անձեռնմխելիությունից միայն այն չափով, ինչքանով դրանք տրամադրված են նրանց ընդունող պետության կողմից: Սակայն ընդունող պետությունը պետք է այդ անձանց նկատմամբ իր իրավազորությունը իրագործի այնպես, որ անտեղի խոչընդոտներ չստեղծի հյուպատոսական հիմնարկի գործառույթների կատարման ժամանակ:

Հոդված 72
Անխտրականություն

1. Սույն Կոնվենցիայի դրույթները կիրառելիս ընդունող պետությունը չպետք է խտրականություն ցուցաբերի տարբեր պետությունների նկատմամբ:

2. Սակայն չի համարվում, որ առկա է խտրականություն՝

ա) եթե ընդունող պետությունը կիրառում է սույն Կոնվենցիայի դրույթներից որևէ մեկը սահմանափակիչ կերպով՝ նկատի ունենալով ուղարկող պետությունում իր հյուպատոսական հիմնարկների նկատմամբ այդ դրույթի սահմանափակիչ կիրառումը,

բ) եթե, ըստ սովորույթի կամ համաձայնագրի, պետությունները միմյանց տրամադրում են ավելի բարենպաստ ռեժիմ, քան այն ռեժիմն է, որը պահանջվում է սույն Կոնվենցիայի դրույթներով:

Հոդված 73
Սույն Կոնվենցիայի հարաբերակցությունը այլ միջազգային համաձայնագրերի հետ

1. Սույն Կոնվենցիայի դրույթները չեն ազդում այլ միջազգային համաձայնագրերի վրա, որոնք գործում են դրանց մասնակից պետությունների միջև:

2. Սույն Կոնվենցիայի դրույթներից ոչ մեկը չի խոչընդոտում պետություններին՝ կնքել նրա դրույթները հաստատող, լրացնող, տարածող կամ ընդլայնող միջազգային համաձայնագրեր:

Գլուխ 5. Եզրափակիչ դրույթներ

Հոդված 74
Ստորագրում

Սույն Կոնվենցիան բաց է Միավորված ազգերի կազմակերպության բոլոր անդամ պետությունների կամ մասնագիտացված հիմնարկների կամ էլ Միջազգային դատարանի կանոնադրության մասնակիցներ հանդիսացող պետությունների, ինչպես նաև Միավորված ազգերի կազմակերպության գլխավոր ասամբլեայի կողմից ստորագրման համար մինչև 1963 թվականի հոկտեմբերի 31-ը՝ Ավստրիայի Հանրապետության արտաքին գործերի դաշնային նախարարությունում, իսկ այնուհետև, մինչև 1964 թվականի մարտի 31-ը, Միավորված ազգերի կազմակերպության կենտրոնակայանում՝ Նյու Յորքում:

Հոդված 75
Վավերացում

Սույն Կոնվենցիան ենթակա է վավերացման: Վավերագրերը ի պահ են հանձնվում Միավորված ազգերի կազմակերպության գլխավոր քարտուղարին:

Հոդված 76
Միացում

Սույն Կոնվենցիան բաց է 74-րդ հոդվածում թվարկված չորս կատեգորիաներից որևէ մեկին պատկանող ցանկացած պետության միանալու համար: Միանալու մասին ակտերը ի պահ են հանձնվում Միավորված ազգերի կազմակերպության գլխավոր քարտուղարին:

Հոդված 77
Ուժի մեջ մտնելը

1. Սույն Կոնվենցիան ուժի մեջ կմտնի քսաներկուերորդ վավերագիրը կամ միանալու մասին ակտը Միավորված ազգերի կազմակերպության գլխավոր քարտուղարին ի պահ հանձնելուց հետո երեսուներորդ օրը:

2. Յուրաքանչյուր այն պետության նկատմամբ, որը կվավերացնի Կոնվենցիան կամ կմիանա նրան քսաներկուերորդ վավերագիրը կամ միանալու մասին ակտը ի պահ հանձնելուց հետո, Կոնվենցիան ուժի մեջ կմտնի այդ պետության կողմից իր վավերագիրը կամ միանալու մասին ակտը ի պահ հանձնելուց հետո երեսուներորդ օրը:

Հոդված 78
Գլխավոր քարտուղարի կողմից ուղարկվող ծանուցումները

Միավորված ազգերի կազմակերպության գլխավոր քարտուղարը տեղեկացնում է 74-րդ հոդվածում թվարկված չորս կատեգորիաներից որևէ մեկին պատկանող պետություններին՝

ա) սույն Կոնվենցիան, 74-րդ, 75-րդ և 76-րդ հոդվածներին համապատասխան, ստորագրելու և վավերագիրը կամ միանալու մասին ակտերը ի պահ հանձնելու մասին,

բ) սույն Կոնվենցիան, 77-րդ հոդվածին համապատասխան, ուժի մեջ մտնելու ամսաթվի մասին:

Հոդված 79
Նույնական տեքստեր

Սույն Կոնվենցիայի բնագիրը, որի անգլերեն, իսպաներեն, չինարեն, ռուսերեն և ֆրանսերեն տեքստերը հավասարազոր են, ի պահ կհանձնվի Միավորված ազգերի կազմակերպության գլխավոր քարտուղարին, որը նրա վավերացված պատճենները կուղարկի 74-րդ հոդվածում թվարկված չորս կատեգորիաներից որևէ մեկին պատկանող բոլոր պետություններին:

Ի հավաստումն որի՝ ներքոստորագրյալները, պատշաճ կերպով լիազորված լինելով իրենց կառավարությունների կողմից, ստորագրեցին սույն Կոնվենցիան:

Կատարված է Վիեննայում հազար ինը հարյուր վաթսուներեք թվականի ապրիլի քսանչորսին:

***Կոնվենցիան Հայաստանի Հանրապետության համար ուժի մեջ է մտել 1993 թվականի հուլիսի 23-ից:**